378
L-21

0120-10

Société des Etudiants Arméniens
Lausanne

„ԼՕԶԱՆԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ“

318
L71

Թիւ 1։

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԼՕԶԱՆԻ „ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ“

4963

IMPRIMERIE
Okour, Apressiantz & Vinnikoff.
Astrakhan.
1914.

51

03 MAY 2013
59.022
Société des Etudiants Arméniens
Lausanne
„ԼՕԶԱՆԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ"
ԿԱՆՈՆԱԳԻՐ
„ԼՕԶԱՆԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ"
ՄԱՅԻՍ 1914
Հայկական գրքերի
Գրադարան
ՀՍՍՌ-Ամբ.ՍՍՀ
Ա. Մ. Գորկու անվ.
Գ. Մեսրոպյանի անվ.
39947-63
Orell Füssli & Vinnitoff.
Athènes.
1914

АРМ.
2-1166а

ԿԱՆՈՆԱԳԻՐ

„ԼՕԶԱՆԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ"

Հիմնուած 1914 փետրուար

I. ՆՊԱՏԱԿ.

«Լօզանի Հայ Ուսանողական Միութիւնն» իրեն նպատակ է դնում.

1. Համախմբել Լօզանի հայ ուսանողութիւնը ակադեմիական հողի վրայ՝ ստեղծելով նրա մէջ մի ընդհանուր մտաւոր և բարոյական կապ։

2. Զարկ տալ ուսանողութեան ինքնազարգացման և մտաւոր յառաջադիմութեան։

3. Ծանօթանալ հայ կեանքին, գրականութեանը և պատմութեանը։

4. Զբաղուել գիտական, գրական ու գեղարուեստական շարժումներով։

5. Ամէն տեսակ բարոյական աջակցութիւն ցոյց տալ Լօզանի նորեկ հայ ուսանողներին։

II. ՄԻՋՈՑ.

Միութեան նպատակին հասնելու միջոցներն են.

1. Կազմակերպումն պարբերական դասախօսութիւնների, վիճաբանական ժողովների, զրոյցների, գրական-գեղարուեստական երեկոյթների, ուսումնական արշաւանքների և այլն։

2. Աշխատել հնարաւոր դէպքում հրատարակել ժողովածուներ, գրքոյկներ և պարպերականներ։

3. Միութիւնը կունենայ իւր մշտական ժողովատեղին և գրադարան-ընթերցարանը։

4. Կապ ստեղծել և յարաբերութիւն պահպանել այլ քաղաքների նոյնանպատակ հայ ուսանողական միութիւնների հետ։

III.

Միութիւնը լինելով զուտ ակադեմիական, հեռապէս և միանգամայն անկուսակցական՝ իւր գործունէութեան մէջ չպիտի ծառայէ քաղաքական որևէ կուսակցութեան շահերին, այլ պէտք է մնայ միշտ անկախ գաղափարական հողի վրայ։

IV.

ԱՆԴԱՄՆԵՐ ԵՒ ՆՐԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ։

«Լօզանի Հայ Ուսանողական Միութիւնը» բաղկացած է իսկական (actif) և աջակից (passif) անդամներից։

1) Իսկական անդամներ կարող են լինել Լօզանի համալսարանի բոլոր հայ ուսանողները, ուսանողուհիները և ազատ ունկընդիրները։

2) Աջակից անդամներ կարող են լինել ժամանակաւորապէս Լօզան գտնուող ուրիշ համալսարանների հայ ուսանողները և Լօզանի կրթական զանազան հաստատութիւնների (Conservat, Inst. agric., Ecole de commerce և այլ) հայ ուսանողները։

3. Իսկական կամ աջակից անդամ լինել ցանկացողները պէտք է ներկայացնեն Վարչութեանը իրենց գրաւոր դիմումը յանձնարարուած Միութեան երեք իսկական անդամների կողմից և կընդունուեն ընդհանուր ժողովի քուէների մեծամասնութեամբ։

4. Քուէի իրաւունք ունեն Միութեան իսկական անդամները միայն։

5. Ամեն մի նորընտիր անդամի կարի անդամական քարթ։

6. Միութեան այն իսկական անդամները, որոնք հեռանալով Լօզանից կցանկանան պահպանել Միութեան հետ բարոյական կապ կհամարուեն թղթակից անդամ։

7. Այն թղթակից անդամները, որոնք մի տարուայ ընթացքում չունենան մի նիւթական կամ բարոյական աջակցութիւն չեն ցոյց տուել Միութեանը, դադարում են անդամ համարուելուց։

V.

1. Ամեն մի անդամ պարտաւոր է կանոնաւոր կերպով ներկայ լինել բոլոր ժողովներին։ Բացակաները պէտք է նախօրօք յայտնեն այդ մասին Վարչութեանը.

2. Ամեն մի անդամ պէտք է նախանձախնդիր լինի Միութեան զարգացման և յառաջդիմութեանն։

3. Բոլոր անդամները պարտաւոր են իրենց միջոցների համեմատ որոշ ամսավճար տալ։

4. Իւրաքանչիւր անդամ պարտաւոր է առնուազն տարեկան մի դասախօսութիւն տալ։

5. Մի սեմեստրի ընթացքում ոչ մի վճար չուող անդամը (առանց յարգելի պատճառների) դադարում է անդամ լինելուց։

8. Հրաժարականները պէտք և լինեն գրաւոր։

7. Այն անդամները, որոնք կնկատուեն Միութեան պատուոյն և անուանն արատ բերող մի որ և է արարմունքի մէջ, ընդհանուր ժողովի 3/4 ձայների մեծամասնութեամբ կհեռացուեն Միութիւնից։

VI. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ։

1. Միութիւնն ունի իւր վարչութիւնը՝ կազմուած ներկայացուցչից, քարտուղարից, գանձապահից և հարկ եղած դէպքում նաև երկու խորհրդականից։

2. Վարչութիւնը վարում է Միութեան բոլոր ընթացիկ գործերը։

3. Վարչութիւնը կընտրուի մի սեմեստրով։

4. Իւրաքանչիւր սեմեստրի վերջում Վարչութիւնը պարտաւոր է ներկայացնել իւր բարոյական և նիւթական գործունէութեան հաշուետուութիւնը.

ա. Ներկայացուցիչ

1. Ներկայացուցիչը հարկ եղած դէպքում կներկայացնէ Միութիւնը համալսարանի և այլ հիմնարկութիւնների ու ընկերութիւնների առաջ։

2. Կընկէ Վարչութեան գործառնութիւնների կանոնաւորութեան վրայ։

3. Միութեան կնիքը գտնւում է ներկայացուցչի մօտ։

բ. Գանձապահ

1, Գանձապահը կդրաւէ անդամավճարների գանձումով և Միութեան ընթացիկ դրամական հաշիւներով։

2. Գանձապահը ընթացիկ ծախքերի համար իրաւունք ունի իւր մօտ պահելու ոչ աւել քան 25 ֆրանկ։

3. Աւելորդ դրամը պահւումէ մի որևէ բանկում Միութեան անունով։

4. Գանձապահը դրամական բոլոր գործառնութիւնները կատարումէ Վարչութեան գիտութեամբ և համաձայնութեամբ։

5. Իւրաքանչիւր երկու ամիսը մի անգամ գանձապահը պարտաւոր է գանձարանի ընդհանուր հաշուեկշիռը ներկայացնել ընդհանուր ժողովին։

գ. Քարտուղար

1. Քարտուղարը վարում է Միութեան բոլոր թղթակցութիւնները ու գրութիւնները և կազմում ժողովների արձանագրութիւնները։

2. Պաշտօնական բոլոր գրութիւնները կստորագրւեն յանուն Վարչութեան ներկայացուցչի և քարտուղարի կողմից։

դ. Խորհրդականներ

1. Խորհրդականները մասնակցումեն վարչական ժողովներին վարչութեան անդամների հետ հաւասար ձայնով։

VII. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ.

1. Ընդհանուր ժողովը Միութեան գերագոյն վերահսկիչ մարմինն է։

2. Միութիւնը կունենայ առնւազն երկու շաբաթը մի անգամ ընդհանուր ժողով։

3. Ընդհանուր ժողովները հրաւիրւում են Վարչութեան կողմից՝ ներկայացնելով նաև ժողովի օրակարգը։

4. Ժողովի մասին պաշտօնապէս յայտարարւումէ ժողովի օրից առնւազն երկու օր առաջ։

5. Ժողովը օրինական է. երբ ներկայ է իսկական անդամների պարզ մեծամասնութիւնը։

6. Ամեն մի ժողով կունենայ իւր նախագահը։

7. Բոլոր խնդիրները վճռւում են քւէների պարզ մեծամասնութեամբ։

Ծանօթ. Եթէ անդամներից նոյն իսկ մէկը պահանջելու լինի գաղտնի քւէարկութիւն, ժողովը պարտաւոր է ընդունել։

8. Նախագահը մասնակցումէ քւէարկութեան միայն մի ձայնի իրաւունքով։

9. Ընդհանուր ժողովում օրակարգից դուրս եղած նոր առաջարկները կարող են նոյն ժողովի զբաղեցնելու նիւթ դառնալ ձայների $^{2}/_{3}$-ի համաձայնութեամբ։

10. Իւրաքանչիւր սեմեստրի սկզբում ընդհանուր ժողովն ընտրում է Միութեան Վարչութիւնը։

11. Մեծ արձակուրդներին ընդհանուր ժողովներ տեղի չեն ունենում։

13. Միութեան իսկական անդամների $^{1}/_{4}$-ի պահանջմամբ Վարչութիւնը պարտաւոր է հրաւիրել ընդհանուր ժողով։

13. Ընդհանուր ժողովի նախագահը պարտաւոր է ամենախիստ կերպով հսկել ժողովի օրինապահութեան վրայ չթոյլատրելով ոչ մի ծրագրային շեղում։

VIII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԱՍ։

Միութեան դրամական հասոյթների աղբիւրներն

են. անդամավճարներ, նվէրներ, երեկոյթների, դասախօսութիւնների և այլն եկամուտները։

IX. ԳՐԱԴԱՐԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ։

Միութիւնը կունենայ իւր Գրադարան-Ընթերցարանը, որը կ'յանձնուի ընդհանուր ժողովի կողմից ընտրուած գրադարանապետին և կ'գտնուի Վարչութեան իրաւասութեան տակ։

X. ՀՐԱՏՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ։

Միութիւնը՝ հրատարակչական գործին ձեռնարկելու դէպքում, ընդհանուր ժողովի կողմից ընտրուում է յատուկ խմբագրական—հրատարակչական մի մարմին, որը կ'զեկուցուի նոյն ընդհանուր ժողովի կողմից տրուած ցուցմունքներով։

XI. ՏԵՂԵԿԱՏՈՒ ԲԻՒՐՕ։

1. Միութիւնը՝ ցանկանալով ամեն կարգի դիւրութիւններ տալ Շվեյցարիա, մասնաւորապէս Լօզան ուսանելու համար գալու ցանկութիւն ունեցող հայ երիտասարդներին և պատանիներին, հիմնում է Տեղեկատու Բիւրօ, որը պահանջած դէպքում տեղեկութիւններ կը հաղորդէ Լօզանի և Շվեյցարիայի այլ համալսարանների կամ դպրոցների ծրագրի, ուսման ընթացքի, ընդունելութեան պայմանների և այլն մասին։

2. Կարելոյն չափ կ'նպաստէ նորեկ երիտասարդների և պատանիների մուտքին համալսարան և երկրորդական դպրոցները, կ'կատարէ թարգմանութիւններ, պահանջած ձեւականութիւններ, կ'գտնէ. պանսիօն, սենեակ, մասնաւոր ուսուցիչներ և այլն։

3. Վարչութիւնը կատարում է Տեղեկատու բիւրոյի պաշտօնը։

XII ԾՐԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ։

Ծրագրի մէջ որևէ փոփոխութիւն մտցնելու համար անհրաժեշտ է գումարել ընդհանուր ժողով, իսկա-

կան անդամների առնուազն 4/5-ի մասնակցութեամբ։ Հարցը կ'վճռուէ ձայների բացարձակ մեծամասնութեամբ (ոչ պակաս քան 4/5)։

XIII. ՄԻՈՒԹԵԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ։

Միութեան լուծման դէպքում նրա ամբողջ գոյքը. կայքը և ստացուածքը յատկացնումէ մի որևէ անկուսակցական հայ ուսանողական ակադեմիական միութեան՝ ընդհանուր ժողովի միաձայն որոշումով։

Հիմնադիր անդամներ Լօզանի «Հայ Ուսանողական Միութեան»։

Պ.պ. Վահան Ղուկասեան. (իրաւաբան ուս.)
« Մուշեղ Արզումանեան (« « .)
« Գարեգին Ամատեան (բժշկութ. ուս.)
« Պօղոս Տէր Պօղոսեան (գրականութ. ուս.)
« Երուանդ Խաչամիրեան (բժշկութ. ուս.)
« Միհրան Հասարաթեան (հնակ. գիտ. ուս.)
« Արմենակ Ալիխանեան (բժշկ. ուս.)
« Օնիկ Սամուէլեան (ինժիներ. ուս.)
« Տէօվլեթեան պէյ (բնակ. գիտ. « .)
« Կարապետ Սամուէլեան (բժշկական ուս.)
« Կարապետ Քուսիկեան (բնակ. գիտ. ուս.)



H A PM.
2-1166a

«Ազգային գրադարան»
NL0237492

54.022
2-1166a